

Հայ-արաբական դրամագիտութեան մէկ քանի հարցերու շուրջ

ՊԵՐՉ ՍԱՊՊԱՂԵԱՆ

Առանց վարանումի կարելի է արձանագրել որ Հայկական դրամագիտութիւնը վերջին քսան տարիներու ընթացքին բոլորեց զարթօնքի նոր շրջան մը, ե՛ւ Հայրենիքին մէջ, ե՛ւ արտասահմանի: Այդ մարզին մէջ անտես չմնաց նաեւ արաբական տիրապետութեան շրջանին Հայաստանի մէջ հատանուած կամ շրջանութեան դրուած արաբական դրամներու հարցը: Այս դժով ուշագրաւ են Խ. Մուշեղեանի ստորագրութեամբ լոյս տեսած հետեւեալ երկու յօդուածները՝ Հայաստանում Տարածուած Վաղ Արաբական Դրամներ («Լրաբեր», 1973, թիւ 12, էջ 32-47), եւ Արքայական Դրամների Թողարկումը Խալիֆաթի «Արմենիա» Նահանգում Ը-ժ. Դարերում, («Պատմա-Բանասիրական Հանդէս», 1973, թիւ 4, էջ 143-156):

Երկրորդ յօդուածին կցուած է «Յաւելուած Ցանկ» մը 215 դրամներու, ուր մանրամասնօրէն յիշուած են հատանման հիճրի եւ փրկչական թուականները, փողերանոցները, դահակալող խալիֆէին, դահաժառանգին եւ այլ պետական անձնաւորութիւններուն անունները:

Բժանինդիր պրպտումով, ցանկին վերջին սիւնակին մէջ տրուած են մատենագիտական այն աղբիւրները, ուր խնդրոյ առարկայ դրամները յիշատակուած եւ ուսումնասիրուած են արաբական դրամագիտութեան մէջ հեղինակութիւն նկատուող մասնագէտներու կողմէ:

Առաջին յօդուածին մէջ, ուր արաբական վաղ շրջանի, կամ Օմայեան իշխանատոհմի դրամները կ'ուսումնասիրուին, Մուշեղեան

անդրադարձած է 41 ալ դրամներու, ինչ որ ցանկին ընդհանուր թիւը կը բարձրացնէ 256 հայ-արարական դրամներու:

Ենթադրաբար հեղինակը իր տրամադրութեան տակ ունեցած չէ արարական դրամագիրտութեան նուիրուած յարաբերաբար նոր հրատարակութիւններ: Այսպէս, օրինակ, ձորճ Մայլը, բացարձակ հեղինակութիւն մըն է արարական դրամագիրտութեան, իր բազմահատոր հրատարակութիւններով եւ յօդուածներով: Արարական երկիրներէն հեղինակութիւններ են Գահիրէի Իսլամական Թանգարանի տնօրէն՝ Ապտիւլ Ռահման Ֆըճի, Պաղատի Թանգարանի տնօրէն՝ Մուհամմէտ Պաքէր Էլ Հուսէյնի, Դամասկոսի Թանգարանի նախկին տնօրէններէն՝ Ապուլ-Փարաճ Էլ Լչ եւ ուրիշներ:

Թէեւ անլիճելի արժէք կը ներկայացնեն 19-րդ դարու վերջերը հրատարակուած Լավուայի, Թիզընհուզընի, Մարքովի, Նիւթցըլի, Լէյն Փուլի եւ ուրիշներու ճօր հաւաքածոները, որոնք անպայմանօրէն կը պահեն իրենց մատենագիրտական աղբիւրները լալու հանգամանքը, ասով հանդերձ կը կարօտին ժամանակի ընթացքին յայտարարուած նորութիւններով ամբողջացումի:

Օգտագործելով պատեհութիւնը, Մուշեղեանի ուշադրութեան կը յանձնենք, կարգ մը աղբիւրներէ քաղուած դրամներու ցանկ մը, մատենագիրտական եւ պատմական ծանօթութիւններով(*):

Մուշեղեան կուռ ու ամփոփ գլխերով կ'անդրադառնայ նորաստեղծ արարական կայսրութեան կողմէ դրամահատանման մարզին մէջ ձեռք առնուած միջոցառումներուն: Սկզբնական շրջանին արաբները կը հետեւին ճիւղն եւ հանդուրժող քաղաքականութեան, խուսափելով կտրուկ եւ արմատական փոփոխութիւններէ: Չանազան մշակոյթներով սնած շրջաններու մէջ անոնք հետեւեցան տեղական աւանդութիւններուն: Սակայն, մօտաւորապէս 50 տարիներու փոխանցման հանդուրանէ մը ետք, հիճրայի 77-ին (695/6) Ապտըլ Մալէք պըն Մրուան հատանեց առաջին սսկեզրամ ՏԻՆԱՐը, զուտ արարական դրոշմով, որուն պիտի հետեւէին, մի քանի տարիներ յետոյ, արծաթ ՏԻՐ ՀէՄն ու պղինձ ՖիԼՍը:

Օմայեան շրջանին, ոսկի տինարները կը կրեն հատանման տարեթիւր, առանց փողերանոցի յիշատակութեան: Ընդունուած կարծիքը այն է որ անոնք հատանուած են կայսրութեան մայրաքաղաք՝ Դամասկոսի փողերանոցին մէջ: Հետեւաբար անհրաժեշտ չէ նկատուած յիշել հատանման վայրը:

*) Դրամներու յիշատակուած ցանկին համար տես՝ Ատա, էջ 177-180:

Տարբեր պիտի ըլլար պարագան արծաթ-տիրհէմին եւ պղինձ-Ֆիլսին համար: Կայսրութեան ընդարձակումով, երկրորդական հասանման վայրեր հաստատուեցան կեդրոնական փողերանոցներու հսկողութեան տակ, զիւրացնելու համար ելեւմտական վարչամեքենային մեծածաւալ գործունէութիւնը, եւ մանաւանդ հակակշռելու համար տուրքերու եւ հարկերու գանձումը:

Արծաթներու վրայ, հատանման վայրէն զատ յիշուած են թուականը, խալիֆէին անունը, երբեմն գահաժառանգին, պատասխանատու վերակացուներու եւ մանաւանդ նահանգներուն մէջ տեղակալի հանդամանքով տիրող ոստիկաններուն (էմիրներու) անունները:

Այս կարգի դրամներն են մասնաւորապէս որ նոր լոյս կը սփռեն 7-10-րդ դարերու հայ ժողովուրդի արաբական շրջանին պատմութեան վրայ, որովհետեւ վերջնական կերպով լուսարանուած չէ տակաւին Հայաստանի մէջ պաշտօնավարող յարափոփոխ ոստիկաններու ցանկը:

Նոյն կարեւորութիւնը ունին Հայաստանի գանազան շրջաններու մէջ հատանուած պղինձ ֆիլսերը, որոնք թէեւ որպէս օղնական «մանրուք» հատանուած են, տեղական շրջանառութեան համար, ասով հանդերձ, կրնան երբեմն օգտակար տեղեկութիւններ հայթայթել պատմութեան:

Մուշեղեան իր երկու յօդուածներուն մէջ կը յիշէ Արմինիա նահանգին մէջ տեղադրուած 11 փողերանոցներ.

- | | | | |
|---------------|-----------|-------------------------------|-------------------|
| 1. Արմինիա | ارمينية | 7. Հարունիէ | هرونية |
| 2. Առան | اران | 8. Մա'ուան Պաբոււնայս | معدين باجنيس |
| 3. Գանձակ | جنزة | 9. Պարտաւ | بردعة |
| 4. Դուլի | ديبل | 10. Մատիւնէդ Պալլիս Էլ-Պայտա' | مدينة بلخ البيضاء |
| 5. Թիֆլիս | تفليس | 11. Տերպեմս | باب الابواب |
| 6. Հարունապատ | هرون اباد | | |

Հատ Ապտիւլ Ռահման Ֆըհմիի, արաբական կայսրութեան մէջ 82 փողերանոցներ դրամ հատանած են(1): Ճոն Ուոլքըր կը յիշէ մօտ 115 փողերանոցներ(2): Հետազային, այս թիւը պիտի բարձրանար

1. الدكتور عبد الرحمن فهمي محمد ، موسوعة النقود العربية وعلم التبعيات ، القاهرة ، ١٩٦٥ ، ص. ٢٨٥/٢٥٠ .

2. John Walker, A Catalogue of the Arab Byzantine and Post Reform Umayyad Coins, London, 1956, p. Ixx-xciii. Յետապտու' Walker:

150 տեղանուններու: Ընդհանրապէս յիշուած վայրերը քաղաքներու անուններ են, որոնց մեծամասնութեան աշխարհագրական դիրքը ծանօթ է: Կայ սակայն կարեւոր թիւ մը փողերանոցներու, որոնց տեղագրութիւնը տակաւին կը մնայ անորոշ եւ վիճելի:

Ասոնց կից կան կարգ մը փողերանոցներ, որոնք յիշատակուած են նահանգներու անուններով, փոխանակ քաղաքներու: Կուտանք քանի մը օրինակներ:

- ԱՐՄԻՆԻԱ** -- Հայաստանը իր վարչական սահմաններով, որոնց մէջ կ'իյնան Արեւելեան եւ Արեւմտեան Հայաստանները, Վրաստանն ու Աղուանքը:
- ԱՌԱՆ** -- Աղուանքը:
- ԱՂ-ՈՒՐՏՈՆ** -- Զինուորական կարեւոր կայք մը, որ կը պարփակէր Յորդանանի նահանգը:
- ԱԼ-ԱՆՏԱԼՈՍ** -- Սպանիան՝ ընդհանրապէս:
- ԱԼ-ԱՅԲԻՔԻԱ** -- Հիւսիսային Ափրիկէն՝ բացի Եգիպտոսէն, որ ծանօթ էր «Միսր» անուան տակ:
- ԱԼ-ՄԱՂԻՊ** -- Արեւմուտք: Ընդարձակ իմաստով Հիւսիսային Ափրիկէի բոլոր երկիրները, ներառեալ Եգիպտոսը(3):
- ԱԼ-ԻՐԱՔ** -- Մամուռի շրջանին հատանուեցաւ առաջին տինարը (ոսկի) 199 թ.ին (814-5) Իրաք հատանման վայրանունով(4), որ տակաւին կնճիռ մը կը մնայ գրամագէտներուն համար, քանի որ կայսրութեան գլխաւոր փողերանոցը, Մատինէղ-էլ-Սալամ՝ մայրաքաղաքն էր կայսրութեան, եւ կ'իյնար Իրաքի մէջ:

Արմինիա -- Մեզ հետաքրքրող այս յորջորջումը արաբական գրամներու վրայ, որպէս փողերանոց կամ հատանման վայր, մեզ կ'առաջնորդէ կարգ մը բարդութիւններու: Ի՞նչ հասկնալու է ԱՐ-ՄԻՆԻԱ մակագրութեամբ: Արմինիայի ո՞ր քաղաքը, Դուի՞ն, Առա՞ն, Թիֆլի՞ս, Պարտա՞լ թէ՛ այլուր:

Անշուշտ այս քաղաքները ունեցած են իրենց սեփական փողերանոցները, ուր պարբերաբար հատանուեցան արծաթ (տիրհէմ) եւ

3. Ֆրեմի, էջ 95:

4. Ֆրեմի, էջ 99:

պղինձ (Ֆիլս) դրամներ, փողերանոցներու առանձին յիշատակութեամբ, ինչպէս մանրամասնորէն յիշատակուած են Մուշեղեանի քորիխին մէջ: Հետաքրքրական է սակայն նշել որ «Արմինիա» մակագրութեամբ արծաթները հատանուած են աւելի յաճախազէպ քան քաղաքային փողերանոցներու թողարկումները, մասնաւորաբար ՕՄԱՅԵԱՆ իշխանատոհմին յինամեայ դրամահատանման տեսողութեան 77-132 թթ. (696-750) ընթացքին:

Մուշեղեանի ցանկին մէջ («Լրարեր», 1973, թիւ 12, էջ 37-38), կը նշմարենք ԱՐՄԻՆԻԱ անուամբ 19 թողարկումներ արծաթ տիրհէմներու, որոնք կ'երկարին հիճրէի 81 թուականէն մինչեւ 123 (700-740), մինչդեռ քաղաքային փողերանոցներէն յիշուած են միայն

| | Տարիներ՝ | | |
|----------------------------------|--------------------------|---|-----------|
| - Գուլիմ (Տեպիլ) | 84, 85, 86, 87 (703-705) | 4 | քողարկում |
| - Առան | 89, 90 (707-709) | 2 | » |
| - Թիֆլիս | 86 (705) | 1 | » |
| - Գանձակ (կասկածելի ընթերցումով) | 94 (712/3) | 1 | » |

Հետեւաբար, քաղաքային փողերանոցներու սահմանափակ թողարկումները բաղդատմամբ Արմինիա նահանգին կանոնաւոր եւ երկարատեւ թողարկումներուն, մեզ կը մղեն նկատի առնելու դրամագիրտութեան կողմէ արձանագրուած կարգ մը մատնանշումներ:

Ա.— Ըստ հին մատենագիր Ալ-Մաքրիզիի, Սալիֆէ Հիշամ պըն Ապտուլ Մալիքի օրով (105-125/724-743) մասնաւոր հրովարտակով վերատեսութեան ենթարկուած է տիրհէմին կշիռը եւ դրամահատանման գործողութիւնը կեղրոնացած կայսրութեան գլխաւոր փողերանոց՝ Ուսսէզի մէջ, որ հիմնուած էր 84 (703) թուականին(5): Տոբթ. Ֆըհմի կը խորհի որ Ուսսէզի կից յարատեւած ըլլալու է նաեւ Գամակոսի աւագ փողերանոցը(6):

Բ.— Ըստ Եունիֆլաշի, Ժազ տը Մորկան Ուսսէզի մէջ կատարած պեղումներու ընթացքին զտած է մեծ քանակութեամբ արծաթ-տիրհէմներ՝ չգործածուած վիճակի մէջ, որոնք կը կրեն Ալ-Անտալուս եւ Ալ-Աֆրիքիա փողերանոցներուն անունները, հաւանաբար յիշեալ վայրերը զրկուելու համար(7):

5. Walker, p. Ixiii.

6. Ֆրիմի, էջ 67:

7. Walker, p. Ixiii, եւ Ֆրիմի, էջ 67:

Փողերանոցային վիճակի մէջ (mint condition) գտնուած այդ դրամները կը հաստատեն մատենագիր Ալ-Մաքրիզիի հաղորդածը: Դժուար չէ եզրակացնել որ այդ դրամները, հակառակ հեռաւոր նահանգներու անուններուն յիշատակութեան, գործնականօրէն հաստատուած էին Ուսաէզի կեդրոնական փողերանոցին մէջ, հետագային զրկուելու համար յիշուած զաղութները՝ շրջանառութեան համար: Շատ հաւանաբար, այս ձեւով, պետութիւնը կը ձգտէր հակազօրի տակ առնել տուրքերու եւ այլ եկամուտներու դանձումը:

Գ. — Պէտք չէ նաեւ անտեսել որ Արմինիա իր վարչական ընդարձակ սահմաններով կը նկատուէր կայսրութեան համար անհանդարտ եւ վտանգաւոր ծայրաշրջան մը (սուղուր), եւ պաշտպանութեան դատի մը բիւզանդական ոտնձգութիւններու դէմ: Նահանգը ենթակայ էր տեւական փոթորիկներու: Անկախաբար ընդի նախարարներու կազմակերպած ապստամբութիւններէն, թօթափելու համար օտար լուծը, կանոնաւոր կերպով կ'ըմբոստանային նաեւ կեդրոնակոյս ձգտումներով համակուած էմիրներ, զինուորականներ եւ արարական ցեղախումբեր, որոնք տեղաւորուած էին Հայաստանի մէջ, իրենց հետ բերելով իրենց տոհմային պայքարներն ու փոխվրէժի աւանդական վէճերը:

Ըստ արար մատենագիր Ալ-Եագուպիի, Հարուն էլ Ռաշիտ Սալիֆէն (170-193/786-809) իր զահակալութեան 23 տարիներու ընթացքին, յաջորդաբար 22 ոստիկաններ զրկած է Արմինիա, վերահաստատելու համար անդորրութիւնը(8): Նման անկայուն պայմաններու տակ կայսրութիւնը կրնար խոհեմ չնկատել Արմինիա նահանգին քաղաքներուն մէջ կանոնաւոր կերպով դրամ հատանելու քաղաքականութիւնը:

Դ. — Դժբախտաբար աղբիւրներ չունինք Արմինիա նահանգին տարածքին վրայ յայտնաբերուած դրամապանծերու մանրամասնութեանց չուրջ, Մուշեղեանի կողմէ հրատարակուած գերք մը, ուստիքէն լեզուով եւ հայերէն ամփոփումով(9) կ'ընդգծէր որ «արարական տիրապետութեան սկիզբից մինչեւ Ը. դարի կէսը, այսինքն Սալիֆաթի Օմայեան հարստութեան ժամանակ, դանձերը ընդհանրապէս հազուադէպ են»(10):

8. تاريخ اليعقوبي — دار بيروت للطباعة والنشر ، ١٩٧٠ ، ص. ٤٢٦ — ٤٢٨
յետայսու՝ Եագուպի:

9. Խ. Մուշեղեան, Դուրեի Դրամագիտական Շրջանառութիւնը Դրամագիտական Տուեաներով, Երեւան, 1962:

10. Նոյնը, էջ 172:

Հայ-արարական զբաժազիտութեան ընազաւառը պեղուած չէ տակաւին: Կը կարօտի մատենագրական պրպտումի: Յարզ հանդիպած չենք հայ հին մատենագրութեան մէջ ամենազոյզն ակնարկութեան մ'իսկ: Սակայն մինչեւ նորայայտ ազբիւրներու յայտնութիւնը կը խորհինք թէ:

1.— Արմինիա նահանգի քաղաքային փողերանոցներու մէջ հատանուած են անտարակոյս բոլոր պղինձ-Փիլսերը, որոնք որպէս օգնական զբաժ, մանր առեւտուրի դիւրացման համար, կրնային հատանուիլ սեւէ ոստիկանի կամ տեղակալի կողմէ, իր անձնական հսկողութեան տակ, առանց զբաժական լուրջ եւ հակակշռուած դրութեան մը կիրարկման:

2.— Օմայեան շրջանին, հակառակ «Արմինիա» մակագրութեան, արծաթ-տիրհէմները հատանուած ըլլալու են կայսրութեան զլխաւոր փողերանոցներէն՝ Դամասկոսի եւ Ուսսէզի մէջ: (77-132/696-750):

3.— Սովորութիւնը կրնայ շարունակուած ըլլալ նաեւ Ապպասեան դերդաստանի գահակալութեան սկզբնական շրջանէն, մինչեւ Հարուն էլ Ռաշիտի օրերը, երբ խալիֆը (170-193/786-809) ապակեղրոնացման քաղաքականութեամբ, ազատութիւն ընծայեց մեծ թիւով նահանգային եւ քաղաքային փողերանոցներու սեփական տիրհէմներ հատանելու, միանգամայն յիշելով ելեւմտական պատասխանատուններու, փողերանոցներու վարիչներու, ոստիկաններու եւ այլ տեղակալներու անունները:

Հետաքրքրական է յիշել, որ ոստիկաններէն ոմանք, որոնց պաշտօն տրուած էր Հայաստանի մէջ անդորրութիւնը վերահաստատելու կամ բմբոստութիւնները զսպելու, բաւականացած են իրենց տեղ գինուորական կամ ելեւմտական տեղակալներ զրկելով զլխահարկը կամ այլ տուրքեր հաւաքելու, կամ՝ պատժական արչաւանքներ կատարելու, առանց անձնապէս Հայաստան ոտք դնելու:

Ալ-Եագուպի, թուելու առեն Հարուն էլ Ռաշիտի կողմէ նշանակուած ոստիկաններու անունները, մասնաւոր յիշատակութեամբ կ'ընդգծէ անունները անոնց, որոնք անձնապէս մեկնած են իրենց պաշտօնավայրը. օրինակ՝ Ալ-Ֆատլ-պըն Եահեա պըն Պալէտ Ալ-Պարմաքին(11):

Թէեւ մատենագրական եւ այլ հիմնական փաստեր չունինք տակաւին, սակայն ամենահնարաւոր սահմաններուն մէջ կ'իյնայ են-

Թաղըն էլ որ Հարուն էլ Ռաշիտէն ետք, «Արմինիա» մակազրութեամբ արծաթները հատանուած ըլլան Դուինի մէջ, նկատի ունենալով անոր քաղաքական, ուղղական եւ մանաւանդ առեւտրական կարեւորութիւնը:

ԱՌԱՆ.— Արաբական մատենագրութեան մէջ Առանը (Աղւանք) կ'ըլնայ Արմինիա նահանգին վարչական սահմաններուն մէջ: Ան երբեմն յիշուած է քաղաքի իմաստով, և յաճախ՝ վարչական-զինւորական շրջանի առումով: Արաբներուն մօտ ընդհանրացած էր այս շփոթը: Մինչեւ այսօր եզիպտացիի մը համար, սուրիացին կը կոչուի ՇԱՄՅԻ, մայրաքաղաք՝ Շամ-Դամասկոս դժով:

Առանի վերաբերեալ արծաթներուն շարքին կը հանդիպինք երբեմն պարզ ձեւով ضرب باران (Տուրիպա պի Առան) եւ կամ ضرب بمدينه اران (Տուրիպա պի Մատինէդ Առան) այսինքն հատանուած Առան քաղաքին մէջ: Այս երկրորդ ձեւին կը հանդիպինք Հարուն էլ Ռաշիտի յաջորդ՝ էլ-Մամունի օրով հատանուած արծաթ տիրհէմներէն ոմանց վրայ, որպէս հետեւանք քաղաքային փողերանոցներուն տրուած հատանման իրաւունքներուն:

Առան իր կարգին կը բաժնէ Արմինիա նահանգին քաղաքական խոռվայոյց վիճակը: Հետեւաբար, ճիշդ պիտի ըլլար ենթադրել որ արծաթ-տիրհէմները հատանուած ըլլալու են, Արմինիայի նման, կայսրութեան գլխաւոր փողերանոցներուն մէջ, ինչպէս Դամասկոս, Ուասէդ, եւ հետագային Մատինէդ էլ Սալամ, մինչեւ Ռաշիտի շրջանը: Տեղական փողերանոցը կրնար առաւելաբար պղինձ-Ֆիլսեր հատանել մանր առեւտուրի համար:

ԴՈՒԻՆ.— Արաբական մատենագրութեան մէջ յիշուած ՏԱՊԻԼ (Դուին) քաղաքը, Արմինիա ընդարձակ նահանգին գլխաւոր կեդրոնն էր, եւ յաճախ նստավայր տեղակալ ոստիկաններու: Դուին՝ հակառակ կայսրութեան կեդրոնէն ունեցած իր հեռաւորութեան, եղաւ մէկը այն սակաւաթիւ փողերանոցներէն, որոնք վաղահասօրէն արծաթ հատանեցին: Արաբական արծաթներուն համար որպէս սկզբնական տարեթիւ ընդունուած է հիճրի 80 տարին: Դուինի մէջ առաջին արծաթը հատանուած է յաջորդ տարին, հիճրի 81 թ.ին: Սակայն 4 յաջորդական թողարկումներէ յետոյ, շարքը կը դադրի, ենթարկուելով Հիլամ պըն Ապտուլ Մալէքի կեդրոնացման միջոցառումներուն: Ռաշիտէն ետք պիտի վերազանէր իր աշխուժութիւնը, հատանելով «Արմինիա» մակազրութեամբ արծաթներու շարքը: Անժրխտելի է անշուշտ Դուինի առեւտրական կարեւորութիւնը տարանցիկ վաճառականութեան որպէս կեդրոն:

ՀԱՐՈՒՆԱՊԱՏ.— Այս փողերանոցին անուամբ հետաքրքրական արձագանքներ հասած են մեզի, յի՛ճ ստեղծելով դրամագիտական շրջանակներու մէջ: Մուշեղեան թիւ 32 եւ 33 դրամներով («Պատմա-Բանասիրական Հանդէս», 1973, թիւ 4, յաւելուած) կը նկարագրէ 168/169 (784/5) թուականներուն թողարկուած արձագանքներ, որոնք կը կրեն ՀԱՐՈՒՆԱՊԱՏ-ԱՐՄԻՆԻԱ անունները: Այլ անձնանուններու սիւնակին տակ կը յիշուի ՀԱՍԱՆ անունը:

Չանց ընելով կրօնական սովորական բանաձևերը կու տանք մեզ հետաքրքրող մակագրութիւնները,

— Յատակողմ՝ ضرب هذا الدرهم بهرون اباد سنة تسعة وستين ومائة
(այս տիրհէժը հատանուած է Հարունապատի մէջ՝ 169 տարեթիւին)

— Յետակողմ՝

ارمينية

حسر

Արարական դրամագիտութեան համար հետաքրքրական երեւոյթ է որ հատանման վայրէջն զատ յիշուի այլ երկրի մը կամ նահանգի մը անունը: Անկասկած որոշ առիթով մը հատանուած է այս դրամը, եւ առնչութիւն ունի հայ ժողովուրդի պատմութեան հետ:

Յետակողմի դաշտի վարի մասին մէջ, քուֆի տառերով գրուած բառը, առանց կէտագրութեան, կրնայ ՀԱՍԱՆ կարգացուիլ, ինչպէս նշանակած է Մուշեղեան, հետեւելով կարգ մը դրամագէտներու ընթերցումին: Սակայն, կրնայ նաեւ կարգացուիլ ձԵՅՇ — բանակ — իմաստով: Դժբախտաբար, ընթերցման նման չփոթութիւններ եւ բարդութիւններ սովորական են կէտագրութեանէ զուրկ քուֆի գրելաձևով բառերուն համար, մանաւանդ երբ փորագրելը մանր գիրերով պատրաստած է կնիքը, առանց մասնաւոր բժանդրութեան:

Բառը ձԵՅՇ կարդալու համար, անհրաժեշտ է որ ակոսանբէն առաջինը ըլլար համեմատաբար աւելի բարձր, փաստելու համար «Եա» տառին առկայութիւնը: Ուրիշներ կ'առարկեն թէ վերջին գիրը «Շին» որոշ կորութիւն պէտք է ունենայ: Անձնապէս, քընելով զանազան նմոյշներ, կը հանդիպինք գրելակերպի տարբերակներու եւ կ'ենթադրենք որ կարծիքներու տարբերութիւնը արդիւնք է իւրաքանչիւր հեղինակի ձեռքին տակ զտնուող նմոյշի զանազանութեան:

Կը ներկայացնենք նմոյշ մը (տես՝ էջ 170):

Տոբթ. Ապտիւլ Ռահման Փըհմի, իր մեծածաւալ հատորին մէջ(12), այս դրամին կ'անդրադառնայ 1708 համարին տակ, շեշ-



տելով որ Հարունապատ անուամբ քաղաք մը յիշատակուած չէ արար մատենագրութեան մէջ, մանաւանդ Եագութ Էլ-Համուրի «Քաղաքներու Համայնագրատարանին» կողմէ (13)։ Տոքթ. Ֆրէմի կ'ենթադրէ որ այս փողերանոցը կրնար դանուիլ հայ-արարական սահմաններուն վրայ տեղ մը (14)։

Յետակողմի բոլոր կը կարդայ ձեՅՅՇ - բանակ, եւ կը խորհի որ դրամը հատանուած է պատմական դէպքի մը առիթով։

Պաղտատի թանգարանի դրամադիտական բաժնի տնօրէն՝ Մուհամմէտ Պաքըր Էլ-Հուսէյնի իր «Իսլամական Դրամներ» գրքին մէջ (15) էջ 41, ծանօթ. 55, կը հետեւի Տոքթ. Ֆրէմիին։

Դամասկոսի պետական թանգարանի նախկին տնօրէն՝ Ապուլ-Ֆարաճ Էլ-Էշ, 1972 թ.ին հրատարակած «Ում Հաճարայ»ի գան-

13.

. ياقوت الحموي ، معجم البلدان .

14. Ֆրէմի, էջեր 283 եւ 506:

15.

. محمد باقر الحسيني ، العملة الاسلامية ، مطبعة دار الجاحظ ، ١٩٦٦ .

ձին(16) ուսումնասիրութեան ընթացքին, կը նկարագրէ 364 համարով եւ 169 (785/6) տարեթիւով նմոյշի մը ուսումնասիրութիւնը:

Ապուլ-Փարաճ համաձայն չէ Լը Սթրանժի տեղագրութեան, որ Հաուֆալի վրայ հիմնուելով, Հարունապատը կը նոյնացնէ Ալ-Չուպայտիյէի հետ(17):

Գոտրինկիթըն(18) Հարունապատը կը տեղագրէ Քիւրտիստանի մէջ, ձիպալի՝ Քըրմընշահ եւ Համատան քաղաքներու միջեւ:

Ապուլ-Փարաճ կ'եզրակացնէ որ հաւանաբար, Հարունապատ անունը արուեցաւ նորաչէն կամ արդէն զոյութիւն ունեցող վայրի մը, որ երկար կեանք չունեցաւ եւ կամ անունն էր ոստիկանական սպարանքի մը, որ տեղակայներու նստավայր դառնալով, կ'ակընկալուէր ժամանակի ընթացքին կարեւոր կեդրոնի կամ քաղաքի վերածել: սակայն քաղաքական եւ վարչական աննպաստ պայմաններու բերումով կրնար չքացած եւ մոռցուած ըլլալ, տեղագրումն ալ անյայտ:

Ապուլ-Փարաճ անդրադառնալով յետսկողմի բառին, կը մերժէ ձեՅՇ ընթերցումը, եւ կ'առաջարկէ ՀԱՍՆ ձեւը, ու կը խորհի որ անձնանունն է տեղական փոքերանոցի մը զլիսաւոր վերակացուին:

Յարգ մեզի ծանօթ տիրահմները կը կրեն 168-169 (784/5-785/6) թուականները միայն: ՀԱՍՆ-ձեՅՇ կնճոխ ատնչութեամբ դրամագէտներու կարծիքները կը տարբերին:

Լալուա(19), Սթիբլը(20), Թիզընհաուզըն(21) և մասամբ Լէյն փուլ կը նախընտրեն ՀԱՍՆ ընթերցումը: Այս պարագային, դրամագէտներէն ոմանք, այս տիրահմները կը վերագրեն Հասան պըն Քահթապային, որ Արմինիայի ոստիկան եղած է առաջին անգամ 136-ին (756) եւ երկրորդ անգամ 154-158-ին (770-774/5), ըստ Փասմէրի(22) եւ Չամպորի(23) ցուցակներուն: Փաստեր չունինք որ ան

16. محمد ابو الفرج العشي ، كزنام حجرة المضي ، ١٩٧٢ ، ص. ٧٩ — ٨١

17. Le Strange, *The Lands of Eastern Califate*, Cambridge, 1905. p. 192.

18. Codrington, *A Manual of Muslim Numismatics*, London, 1904.

19. H. Lavoix, *op. cit.*, vol. I, No. 735.

20. J. G. Stickel, *Handbuch Zur Morgenlandischen*, Munzkunde, 1870.

21. W. Tiesenhausen, *Monnaies des Khalifes*.

22. Թ. ՖԱՍՄԷՐ — վիքնմա, Միտիքարեան տպարան, 1933:

23. معجم الانساب والاسرات الحاكمة في التاريخ الاسلامي ، مطبعة Zambaur

جامعة فؤاد الاول ، ١٩٥١ .

ուստիկան եղած է երրորդ շրջանի մը համար՝ 168/169 (784-786) տարիներուն :

Լէյն Փուլ նկատի ունենալով այս պարագան, երկընտրանքի մէջ է ՀԱՍՍՆ ձեւը իւրացնելու, մանաւանդ որ կը պահսի բառին Ա.Լ որոշիչ յօդը - Ա.Լ-ՀԱՍՍՆ -, եւ կը ցուցակագրէ առանց այլ մեկնութեան :

Պոլսոյ պետական թանգարանի գրամագիտական բաժնի անօրէններ՝ Իպրահիմ եւ Ճեյրիյէ Արթուք, 1971 թ.ին իրենց կողմէ հրատարակուած ցուցակագրքին մէջ (Corpus) կ'անդրադառնան նոյն գրամին(24) :

Յետասկողմի բառը ՀԱՍՍՆ կարդալէ ետք, Հարունապատի տեղագրութեան համար կը մատնանշեն թէ այս քաղաքը կը գտնուի Վանի նահանգին մաս կազմող՝ Պաշքալէի շրջանին (Նահիյէ) մէջ :

Աւելի մանրամասնութեան համար, մեր կողմէ եղած դիմումի մը ընդառաջելով, Իպրահիմ Արթուք 1973 թ.ի Յուլիսին գրուած նամակով մը կ'իմացնէր թէ վերատեսութեան ենթարկելով նախկին գիրքը, այժմ Հարունապատը կը տեղադրէր «Հայաստանի մէջ, Չապ գետին արեւելքը՝ իրանեան սահմանին մօտ գիւղ մը : Իսկ գետին արեւմուտքը կը գտնուի Պաշքալէն» : Իպրահիմ Արթուք կ'աւելցնէ թէ բախտաւոր եղած էր հանդիպելու Հարունապատ անուան, հրատարակութեան մը մէջ, որ կը կոչուի «Թուրքիոյ բնակուած Վայրերու Ուղեցոյց»(25) : Ապա՝ թէ 1936 թ.ին հրատարակուած քարտէզի մը վրայ Հարունապատը յիշատակուած է Չապ գետին արեւելեան կողմը, Իրանի սահմաններուն մօտ(26) :

Իպրահիմ Արթուքի տեղագրութիւնը մեզի կը թուի ամենէն համոզիչը եւ մենք ալ ունինք այն համոզումը որ այս փողերանոցը կը գտնուէր պատմական Հայաստանի Վասպուրականի սահմաններուն մօտ :

ՀԱՐՈՒՆԻԻ - Ըստ Եագութի, Հարունիի փոքր քաղաք մըն էր Մարաշի մօտ, զոր Հարուն էլ-Ռաշիտ վերաշինեց եւ ամրացուց 183 թ.ին (799-800)(27) : Եագութ կ'աւելցնէ թէ իր «Քաղաքներու Հա-

24. Ibrahim Artuk, Cevriye Artuk, Istanbul Arkeoloji Muzeleri Teshir-deki Islamie Sikkeler Katalogu, Istanbul, 1971, p. 55, No. 203.

25. Turkiyede Meskun Yerler Kilavuzu, vol. I, Ankara, p. 483.

26. Meridional between 43-44 degree, Altitude between J-K.

27. Եագութ, հատր Ե., էջ 388:

մայնագլխարանը» գրած միջոցին, Հարունիէն կը պատկանէր Կիլիկիոյ Լեւոն Ա. թագաւորին(28) :

Հարունիէն ծանօթ է հայ պատմագրութեան : Ըստ Տոքթ. Յ. Տ. Ղազարեանի Հարունիէ կը գտնուէր Ջահան զետին ձախ ափին վրայ եւ ամրացեալ քաղաք մըն էր : Քաղաքը կը հսկէր Ամանոսի արեւելեան անցքերուն վրայ եւ կը պաշտպանէր Թիւ Համաունի եւ Անարգարայի թիկունքը(29) :

Կիլիկեցիներուն, եւ մանաւանդ մարաշցիներուն Հարունիէն ծանօթ էր Սառնայ անուան տակ, որ աղաւաղուած ձեւն է Հառնայ = Հարունիէ անուան :

Ըստ Ալիշանի, Կիլիկիոյ Հեթում Ա. թագաւորը (1226-1270 թթ.) 1236 թ.ի Յունուարին, մասնաւոր հրովարտակով մը Հարունիէն ժամանակաւոր կերպով զիջած էր Տեւոնեան ասպետներուն(30) :

Եագութ Էլ-Համուի կ'աւելցնէ թէ կար երկրորդ Հարունիէ մըն ալ, որ կը գտնուէր ՃԱԼՈՒԼԱ-ի մօտ : Ճալուլան կը գտնուէր Պաղտատի հիւսիս արեւելքը, 70 մղոն հեռաւորութեամբ, Իրաք-Իրան ճամբուն վրայ(31) :

Մուշեղեանի ցանկին մէջ, 169 տարեթիւով յիշուած են երկու արծաթ տիրհէմներ՝ 34 եւ 35 համարներուն տակ : Երկու դրամներն ալ կը կրեն Սուլթանմա պըն Սաղէմի անունը, որ ըստ Փամէրի եւ Ջամպորի ժամանակագրութիւններուն, ոստիկան էր Արմինիա նահանգին : Այդ տիրհէմներէն մին հատանուած է Հարունապատի մէջ, իսկ միւսը՝ Հարունիէի :

Այս պարագան կը ստեղծէ տեղագրական կնճիռ մը : Ո՞ր կը գտնուէր խնդրոյ առարկայ Հարունիէն : Կիլիկիոյ թէ Իրաքի մէջ : Կարգ մը նկատումներ մեզ կը մղեն երկու տեղագրումներն ալ մեր-ժելու :

Ա. Եթէ Կիլիկիոյ Հարունիէն հիճրի 183 թ.ին վերաշինուելով ստացաւ ռազմական եւ տնտեսական կարեւորութիւն, ապա ուրեմն 169 թ.ին, կամ՝ 14 տարիներ առաջ, որպէս աննշան աւան չէր կրնար փողերանոց ունենալ :

28. Եագութ մեռած է 1228 թ.ին : Իր համայնագլխարանը գրած է Լեւոն Ա. թագաւորի գահակալութեան շրջանին :

29. Տոքթ. Յ. Տ. Ղազարեան, Հայկական Կիլիկիոյ Տեղագրութիւն, Ամսթիլիաս, 1966, էջ 43 :

30. Հայր Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 207 :

31. Arnold Toynbee & Edward D. Myers, A Study of History, vol. XI, p. 36, Historical Atlas.

Բ. Դժուար է ենթադրել որ ստիկան Սուզէյմա պըն Սադէմի իրաւասութիւնները կ'երկարէին Կիլիկիայէն մինչեւ Կովկաս ընդարկող ընդարձակ աշխարհամաս մը, մանաւանդ որ Սուզէյմայի գլխաւոր առաքելութիւնն էր զսպողական արշաւանքներ կատարել Արմինիա նահանգին մէջ:

Գ. Երբ գոյութիւն ունէր կայսերական կեդրոնական փոդերանոցը Մասինէզ էլ-Սալամի (Պաղտատ) մէջ, անտրամարանական պիտի ըլլար ահնկալել որ անոր մօտ գտնուող, Հարունիէ անուամբ փոքր եւ աննշան աւան մը, դրամ հատանէր բացառիկ յիշատակութիւններով:

Դ. Ըստ Մանանգեանի (Քննիկն Տեսութիւն Հայ Ժողովրդի Պատմութեան, Բ. հար. Բ. մաս, Երեւան, 1960, էջ 219-223) Արտաւազդ եւ Մուշեղ Մամիկոնեանները 774-775 թ-ին յաջողած էին ոտքի հանել «ռամիկ ժողովուրդի բազմութիւնը» եւ հրահրել Արծրունեաց եւ Ամատունեաց նախարարները: Հայ ազատագրական բանակը կր սպառնար Արճէշ, Բերկրի եւ Սլաթ քաղաքներուն: Հետեւաբար ընկած էր ամբողջ Վասպուրականը:

Հակառակ ապստամբութեան զսպումին, կրնայ ըլլալ որ որոշ շրջաններ բոլորովին չենթարկուեցան եւ շարունակեցին պայքարը, ամբանալով Վասպուրականի կամ անոր կից Տարօնի դժուարամերձ վայրերուն մէջ, 775-787 տարիներու ընթացքին, ստիպելով կայսրութիւնը որ ապստամբ շրջաններուն մօտ կեդրոնացնէր իր ռազմավարչական կեդրոնը, ու մասնաւոր դրամ հատանէր ԱՐՄԻՆԻԱ-ՃԵՅՇ (բանակ) մակազրութիւններով:

Ե. Եթէ յանդուզն չնկատուի մեր եզրակացութիւնը, մենք համոզուած ենք որ ՀԱՐՈՒՆԻԷ եւ ՀԱՐՈՒՆԱՊԱՏ անունները կը մերարերին միեւնոյն քաղաքին, որ Իպրահիմ Արթուրի տեղագրութեան համաձայն, կրնար գտնուիլ ռազմապիտական նկատումներով, Զապ գետին եւ Պաշքալէի միջեւ:

Բացառուած չէ որ միեւնոյն քաղաքը ունենար երկու անուանաձեւեր, մին իրանական տարազով, իսկ միւսը՝ արաբական: Ապրպսեան շրջանին գերակշիռ դեր ունէր հին իրանեան ազնուականութիւնը եւ մանաւանդ մշակոյթի բազմապիսի ազդեցութիւններով կը տիրէր պալատական կեանքին, ինչպէս նաեւ բարքերու, արուեստի եւ լեզուի բնագաւառներուն վրայ:

Արաբական դրամապիտութեան համար մեր առաջադրած եզրակացութիւնը բացառութիւն չէ ինքնին: Նոյն ձեւով ունինք նաեւ այլ փոզերանոց մը՝ էլ Մուպարաքիյէ եւ Մուպարաք-Ապատ (32):

ՄԱՍԱՆ ՊԱՃՈՒՆԱՅՍ (معدن باجنيس) -- Եագութ ճշգրիտ է հաբ բառին ուղիղ ընթերցումը կաւելցնէ թէ կը յիշուի Արճէշի հետ միասին, իւրաքանչիւր շրջանին մէջ եւ մաս կը կազմէ Չորրորդ Հայքին, հարուստ՝ պղի, պղինձի եւ մակնեղիայի հանքերով(33) : Արմինիա հատուածին տակ(34) կը թուէ Չորրորդ Հայքի քաղաքները, Շմշաթ (Արշամաշատ), Կալիկուլա (Կարին), Արճէշ եւ Պաճունայս :

Արամ Տ. Ղեւոնդեան Պաճունայսը կը տեղադրէ Ապահունեաց դաւառին մէջ եւ կամ՝ «ծայրայեղ դէպքում մի քիչ հեռու՝ Հարբ դաւառում կամ իւրաքանչիւր»(35) :

Արթուր՝ հիւրի 195 տարեթիւով տիրահամի մը անդրադառնալով, Պաճունայսը կը տեղադրէ Ամիդի եւ Մալաթիոյ միջեւ անորոշ վայր մը, ուր երկաթի եւ պղինձի հանքեր կը գտնուին :

Քաղաքին կցուած Մա՛տան բառը թէեւ արաբերէն կը նշանակէ մետաղ եւ հանք, սակայն պայման չէ անպայմանօրէն զայն տեղադրել հանքերով հարուստ շրջանի մը մէջ : Մա՛տան կը նշանակէ նաեւ փողերանոց(36), ինչպէս օրինակ չափազանց հազուադիւր եւ նշանաւոր Օմայեան Հիւրի 105 տարեթիւով ոսկի տինարը, որ կը կրէ հետեւեալ մակարութիւնը المؤمنین معدن , այսինքն՝ հաւատացեալներու իշխանին փողերանոցը :

Պաճունայս անունը կրնայ նաեւ ըլլալ ազաւազուած ձեւը ԲՁՆՈՒՆԵԱՅ դաւառին :

ՄԱՏԻՆԵՂԻ ՊԱԼԽ ԷԼ-ՊԱՅՍԱ՛ (مدينة بلخ البيضاء) -- Մինչեւ այսօր ծանօթ միակ տարեթիւն է Հիւրի 111 (729-730) թուականով տիրահամ մը : Թէ որքան համոզիչ են փաստերը, այս փողերանոցը գանազանելու սովորական ՊԱԼԽ (Սարասան) քաղաքէն, կը մնան վիճելի : Արաբական բազմաթիւ քաղաքներ ունին զերազիր ածականներ : Այսինքն՝ Հալէպ քաղաքը ծանօթ է նաեւ Հալապ Էլ-Շահապ՝ կամ միայն Էլ-Շահապ՝ անուններով : Էլ-Շահապ՝ կը նշանակէ դորշաղոյն, ինչպէս Պալսին կցուած «Պայտա»ն կը նշանակէ սպիտակագոյն : Հին մատենագրութեան մէջ Հալէպը ծանօթ է նաեւ Հալապ Էլ-Մահրուսա, կամ՝ Էլ-Մահրուսա անուններով, այսինքն՝ Աստուածապահական Հալէպ :

Մուշեղեանի ցանկին թիւ 42 եւ 44 տիրահամները, հատանուած հիւրի 170 եւ 171 տարիներուն (786-787/8) Հարունիէի փողերանոց

33. Եագութ, հատոր Ա., էջ 314 :

34. Եագութ, հատոր Ա., էջ 160 :

35. Արամ Տ. Ղեւոնդեան, Արաբական Ամիրայութիւնները Բագրատունեաց Հայաստանում, Երեւան, 1965, էջ 222 :

36. Catalogue du Musée National de Damas, Damas 1969, p. 183.

ցին մէջ, անձնանուններու եւ յիշատակութիւններու սիւնակին մէջ յիշուած է **رجاح** անորոշ մակագրութիւնը, զոր հեղինակը թարգմանած է «փառքը շատ» ձեւով: Կ'ենթադրենք որ վերծանումը արդիւնք է թիւրիմացութեան: Ապուլ-Ֆարաճ էլ-Էշ, «Ում Հաճարա» դանձին մէջ (էջ 102, թիւ 407), կ'անդրադառնայ նմանօրինակ տիրահմի մը, ուր մակագրութիւնը նկարագրուած է այսպէս, օրինակ

رجا

ح

Ենթադրութիւններու դժով Ապուլ-Ֆարաճ կ'առաջարկէ օւամբողջացնել **يوسف** ձեւով եւ դրամը վերագրել Եուսէֆ պըն Ռաշէտ էլ-Սուլամիին, որ հիճրի 170/171 տարիներուն Հայաստանի ստորկան եղած է: Ամէն պարագայի տակ հարցը կը մնայ անորոշ եւ կը կարօտի աւելի համոզիչ բացատրութեան:



Արարական կայսրութիւնը որ կ'երկարէր Հնդկաստանէն մինչեւ Ատլանտեան ովկիանոս, երկար դարերու ընթացքին շարունակեց հատանել զբեթէ միօրինակ դրամներ, կրօնական բանաձեւերով եւ սակայն հարուստ պատմական յիշատակութիւններով: Բացառութիւն կը կազմեն թուրքմէն, սելճուկ եւ օրդուկեան պատկերազարդ դրամները:

Արարական դրամագիտութեան գլխաւոր կնճիռներն ու դրժւարութիւնները արդիւնքն ան կէտադրութենէ զուրկ՝ քուֆի գրեւակերպին եւ անոր ստեղծած շփոթութիւններուն: Կնիքներու անբժախընդիր պատրաստութիւնը կրնայ շփոթ ստեղծել եօթը եւ եօթանասուն, կամ՝ ինը եւ իննսուն թուանշաններուն ճշգրիտ ընթերցման շուրջ, ինչպէս փողերանոցներու եւ յիշատակուած անձերու անուններուն անսխալ վերծանման առնչութեամբ:

Բազմաթիւ ճորտ, կիսանկախ կամ կեդրոնախոյս իշխաններ (էմիր) դրամ հատանած են, որոնց անուններուն շուրջ լուռ կը մնան մատենագրական աղբիւրները: Կարելոր թիւ մը փողերանոցներու կը մնայ տակաւին անորոշ տեղագրութեամբ եւ վիճելի:

Հայ-արարական դրամագիտութեան ճիւղը փոքր մարզ մըն է անչուշտ բազդատմամբ կայսրութեան հատանած դրամներուն, բայց խիստ կարելոր հայոց պատմութեան հետ առնչութիւն ունեցող իր կապերով: Անպայմանօրէն մարզը պիտի ըլլար աւելի ընդարձակ եւ շահեկան, եթէ Բագրատունիներու շրջանին, հայ Բագրատունի իշխաններն ու թագաւորները, հետեւելով այլ կիսանկախ էմիրներու օրինակին, զէթ պղինձ դրամներ հատանէին զուտ հայատառ կամ հայ-արար երկլեզուեան տառերով:

**ՀԱՏԱՆՈՒԱԾ ԳՐԱՄՆԵՐՈՒ ԱՐՄԻՆԻԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՆԱՀԱՆԳԻՆ ՄԷՋ
ՑԱԻԵԼՈՒԱԾԱԿԱՆ ՑԱՆԿ**

Ու. = Ոսկի Տիգրաք Ար. = Արծաթ Տիգրիտ Պղ. = Պղինձ Ֆիլ. = Ֆիլի

| Թիվ | Մեծագր | Տարեթիվ | Ֆրիզ. | Տարեթիվ | Յիշատակում | Գահակալի նախնիներ | Յարկանչական յիշատակումներ և անձանուններ | Մասնագրական աղբիւրներ |
|-----|--------|---------|-------|---------|------------|---|---|--------------------------|
| 1 | Պղ. | 86 | 705 | Դուրին | Դուրին | الوليد بن عبد الملك Ալուալիս Պրն Ապտղ Մալէֆ | Սարրաֆ, 24 | (Ա) |
| 2 | Ու. | 93 | 711/2 | Դուրին | Դուրին | » | Սարրաֆ, 25 | |
| 3 | Ար. | 143 | 760/1 | Արմինիա | Արմինիա | النصور ابو جعفر عبدالله Ալ Մանուր | Սարրաֆ, 26 Ֆրիմի, 1562 Ֆրիմի, 1563 | |
| 4 | Ար. | 144 | 761/2 | Արմինիա | Արմինիա | » | | |
| 5 | Ար. | 145 | 762/3 | Արմինիա | Արմինիա | » | BMC, 25 Էլ, 39 (Բ) | |
| 6 | Ար. | 145 | 762/3 | Արմինիա | Արմինիա | » | Ֆրիմի, 1564 | |
| 7 | Ար. | 146 | 763/4 | Արմինիա | Արմինիա | » | Ֆրիմի, 1565 Սարրաֆ, 100 | (Գ) |
| 8 | Ար. | 146 | 763/4 | Արմինիա | Արմինիա | » | RIC, 223 | |

| | | | | | | | | |
|----|-----|-----|-------|------------------------------------|----------------------|--|---|--------------------------|
| 9 | Ար․ | 147 | 764/5 | Արան | » | Արան | » | BMC, 26, էջ 40 |
| 10 | Ար․ | 149 | 766/7 | Արան | » | Արան | » | RIC, 224 |
| 11 | Ար․ | 149 | 766/7 | Արմինիա | » | Արմինիա | » | Սեփական |
| 12 | Ար․ | 150 | 767/8 | Արմինիա | » | Արմինիա | » | BMC, 29, էջ 40 |
| 13 | Պղ․ | 163 | 779 | Բրժճա | Աբու Եբդուլլահ Թալիս | Աբու Եբդուլլահ Թալիս | » | Ֆրանսի, 1566 RIC, 367 |
| | | | | | | Բն Ասիդ Եզ Ալլահ Նսրահ | | |
| | | | | | | Հրամանով Էմիր Երզնիս Պրն Սաայ- տի, Աստուած յար- քար Երանք Գորացեկ | | |
| 14 | Ար․ | 176 | 792/3 | Արմինիա | Աբու Եբդուլլահ Թալիս | Աբու Եբդուլլահ Թալիս | » | Սեփական (9) |
| 15 | Ար․ | 183 | 799 | Արան | » | Արան | » | Արքութ, 183 (b) |
| 16 | Պղ․ | 184 | 800 | Արան | » | Արան | » | RIC, 364 (2) |
| 17 | Ար․ | 191 | 806/7 | Մեդն Բաջնիս Մա'տաֆ Պախուխալս | » | Մեդն Բաջնիս Մա'տաֆ Պախուխալս | » | Արքութ, 256 (b) |

| | | | | | | | | |
|----|-----|-----|--------|-----------------------------------|--|--|-------------|-----|
| 18 | Պր. | 193 | 808/9 | اران Ասան | » | العباس بن زفر عبد | RIC, 365 | (L) |
| 19 | Ար. | 194 | 809/10 | معن باجنيس Մա'տան Պանունայս | الامين ابو موسى محمد Ալ-Ասիհն | عبيد | RIC, 245 | |
| 20 | Ար. | 195 | 810/11 | معن باجنيس Մա'տան Պանունայս | » | عبيد | Արքութ, 279 | |
| 21 | Ար. | 195 | 810/11 | معن باجنيس Մա'տան Պանունայս | » | داود صرد | RIC, 247 | |
| 22 | Ար. | 211 | 826/7 | مدينة اران Մասիհնէդ Առան | الامون ابو جعفر عبدالله Ալ-Մա'մուն | عبيد الله بن يحيى Աստ Ալ-Ա'լա Պրն Ահմատ Ռափէլ Ալլահ Պրն Եահեա | RIC, 263 | |
| 23 | Ու. | 241 | 855/6 | ديبل Գուլին | التوكل ابو الفضل جعفر Ալ-Մուքաաաաաաաա | ANS, | | (Ք) |
| 24 | Ու. | 243 | 857/8 | ارمينية Արմինիա | » | Ֆրիսի, 2119 | | |
| 25 | Ար. | 244 | 858/9 | ارمينية Արմինիա | » | Արքութ, 339 | | |
| 26 | Ու. | 246 | 860/1 | ارمينية Արմինիա | » | Աարափ, 214 | | |

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԱՂԲԻՒՐՆԵՐ ԵՒ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ
ՅԱԽԵԼՈՒԱԾԱԿԱՆ ՑԱՆԿԻՆ

Ա.- Հաւաքածոյ Ապտուլլահ Շուքր Ալ-Սարբաֆի, նուիրուած Պազտաւի պետական քանդարանին - Տես պարբերագիրք *بغداد خاص* — عدد *المسوكات* ، 1979 թ. Յետայսու՝ ՍԱՐԲԱՖ:

Բ.- Stanley Lane Poole, *The Coins of the Eastern Khaleefehs, in the British Museum, London, 1875.* Յետայսու՝ BMC.

Գ.- George C. Miles, *Rare Islamic Coins*, «The American Numismatic Society», New York, 1950. Յետայսու՝ RIC.

Դ.- Պըլս բառը ներկայիս ո՛չ գործածական, արաբ ցեղախումբերու բարբառին մէջ կը համապատասխանէր «կենաց» մաղթանքին, Ապրի՛-կեցցէ՛ իմաստով: Յաճախ կը հանդիպինք արաբական դրամներու վրայ, առանձին կամ կըրկներու՝ Պըլս Պըլս ձեւերով:

Ե.- Ibrahim and Cevriye Artuk, *Istanbul Arkeoloji Muzeleri Teshirdeki Islami Sikkeler Katalogu*, Istanbul, 1971. Յետայսու՝ ԱՐԹՈՒՔ:

Զ.- Մայրիզ որոշ վերապահութեամբ կը յիշէ այս դրամը, փոքրբանոցին Առան ընթերցումը կասկածի տակ դնելով:

Է.- Մուշեղեանի ցանկին մէջ, քիւ 98, այս դրամը նկարագրուած է այլ ձեւով.

الامين محمد بن امير المؤمنين ام

(Ալ-Ամին Մուհամմադ-ն որդին ուղղահաւատների տիրոջ, մայր.) դժբախտաբար ձեռքի տակ չունինք հեղինակին աղբիւրը: Սակայն «մայր» բառը առանձին իմաստ չունի մակագրութեան մէջ: Դրամը կը պատկանի Հարուն Ալ Ռաշիդի կնոջ եւ Ալ-Ամինի մօր՝ Զուպայտային, որ իր գաւկիմ՝ ճա՛փարի անուամբ կը կոչուէր Ռա՛ ճա՛փար (մայր ճա՛փարի) ըստ արաբական ընկալեալ սովորութեան: Ան ուխտագնացութեան ձեռնարկեց Մեքքէ 190-ին (805/6) եւ հաւանաբար իր վերադարձին, գահաժառանգ որդին՝ Ալ-Ամին, յուշադրական այս տիրիէ՛ւրը հատանեց մօրը անուամբ: Տես՝ Եագուպի, էջեր 428, 433, 434:

Մեզի ծանօթ նմուշներուն քարգմանութիւնը պիտի ըլլար - (Մայր ճա՛փարի... հատանուած հրամանով հաւատացեալներու իշխան՝ Ալ-Ամին Մուհամմադի):

Ը.- Հաւանաբար սմբողջական անունն էր Ալ-Ապպաս Պըն Զուփար Ալ-Հիլալի

العباس بن زفر الهلالي

Թ.- *Annual Report of the American Numismatic Society, 1968, p. 10.*

SOME QUESTIONS REGARDING ARMENO-ARAB NUMISMATICS

BERJ SABBAGHIAN

(Summary)

In the last decades the Armenian numismatics is passing through a new period of revival, both in Armenia and abroad. In this field the question of the Arab coins, struck in «Armenia» district of the Arab Empire, or put into circulation there during the Ommayad and Abbassid rule, has not been overlooked. With this respect the studies of Kh. Mousheghian, printed lately in «Lraber» (Yerevan, 1973, No. 12), and «Patma-Banassirakan Handess» (Yerevan, 1973, No. 4), may be regarded as a considerable contribution.

(In his article B. Sabbaghian, after appreciating Mousheghian's above mentioned studies, tries, in his turn, to tackle some problems of Armeno-Arab numismatics. The two main problem are:

1. The question of the mints of Arab coins in Armenia,
2. The reading of inscriptions of some Arab coins.

At the end of the article the author presents an additional list of Arab coins struck in the «Armenia» district of the Arab Empire).